ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«ՇԻՐԱԿԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ կարդալու կարողությունների զարգացումը և բառապաշարի հարստացումը

Առարկա՝ մայրենի

Դպրոց՝ Շիրակի մարզ Կամոյի միջնակարգ դպրոց

Ուսուցիչ՝ Վարդիթեր Գրիգորյան

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…… 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ Կարդալու կարողությունների ուսուցումը……----------4

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ: Մայրենիի ուսուցման և կարդալու որակական հատկանիշների ընդհանուր բնութագիրը և հիմնական նպատակները……...---------- 11

Եզրակացություն……. 17

Օգտագործված գրականության ցանկ…… 18

Ներածություն

Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում:Տարական դասարանների մայրենի լեզվի դասընթացում առաջատար տեղ է գրավում ընթերցանությունը: Դրա նպատակն է՝ զարգացնել աշակերտների կարդալու ու պատմելու կարողությունները, խոսքը հարստացնել նրանց ճանաչողական գիտելիքներն ու բառապաշարը:Բառապաշարի ձևավորումն ու զարգացումը մայրենիի դասի կարևորագույն բաղադրամասերից են: Ուսուցման գործընթացում բառապաշարի հարստացման և կատարելագործման հիմնական աղբյուրը ընթերցանությունն է, ընթերցածի վերարտադրությունը և ուսուցչի խոսքը:Երեխայի խոսքի վրա ազդում է նաև շրջապատի խոսքը, հեռուստատեսությունը, մամուլը և այլն:

Մայրենիի դասավանդման ընթացքում ընթերցանության նյութերի միջոցով ուսուցողական նպատակներից զատ լուծվում է նաև դաստիարակչական լուրջ խնդիրներ՝գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական ու կամային մի շարք լավագույն հատկանիշների դաստիարակում և այլն:

Մեթոդիկայում հայտնի են նոր բառի իմաստի բացատրության ուղղությամբ տարվող աշխատանքի բազմաթիվ հնարներ, որոնք ոչ միայն նպաստում են բառապաշարի հարստացմանը այլև այդ հնարների իմացությունն ու դրանց կիրառումը բառային աշխատանքի ընթացքում դասը դարձնում են հետաքրքիր և արդյունավետ:

Տարրական բառապաշարի հարստացման ուղղությամբ հիմնականում աշխատանք է տարվում մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի վերլուծության ժամանակ: Այս աշխատանքն իրականանում է ընդամենը տեքստի մակարդակում: Սակայն

կրտսեր դպրոցականների կապակված խոսքի զարգացման մեթոդիկան նախատեսում է նաև հատուկ աշխատանք մի շարք ուղղություններով։

Բառային աշխատանքի բոլոր ուղղությունները տարրական դասարաններում պետք է իրականացնել գործնական ճանապարհով՝ գլխավորապես հենվելով մայրենիի դասագրքերում զետեղված գեղարվեստական բնագրերի վրա՝ առանց տեսական տեղեկություններ, սահմանումներ, քերականական եզրույթներ հաղորդելու։

Աշխատանքի արդիականությունը

Թեմայի արդիականությունը բխում է արդի հանրակրթության պահանջներից, ըստ որի՝ մայրենի լեզվի տարրական դասընթացի կարևորագույն խնդիրներից է ուսումնառության սկզբից ևեթ սովորողների բառապաշարի հարստացումը։

Աշխատանքի նպատակն է՝

Ուսումնասիրել խոսքային մեթոդների արդյունավետությունը։

Ուսումնասիրել ընթերցանության միջոցով աշակերտների բառապաշարի հարստացումը՝ դասատվությունն ավելի հետաքրքիր դարձնելով։

Աշխատանքի խնդիրներն են՝

Համեմատել խոսքային մեթոդների արդյունավետության աստիճանը։

Ուսումնասիրել և գտնել դրանցից առավել արդյունավետ։

Ուսումնասիրել կարդալու հմտության ձևավորման առանձնահատկությունը։

ԳԼՈՒԽ 1. Կարդալու կարողությունների ուսուցում

Կարդալու ուսուցումը <<Մայրենի>>-ի տարրական դասընթացի ամենահիմնական նպատակներից մեկն է։Ձեռք բերելով կարդալու կարողություն և այն հետևողական և տևական վարժությունների միջոցով վերաձելով հմտության՝ աշակերտը հնարավորություն է ստանում հաղորդակից դառնալու գիտության ու գրականության հրաշալիքներից,մարդկային հասարակության բազմադարյան պատմությանը , մարդկանց արտադրական փորձին, լեզվի մեջ և լեզվի միջոցով մեզ փոխանցված բազում սերունդների գիտական մտքի ստեղծագործություններին, որոնք ամփոփած են գրքերում։Հենց այս նկատառումով էլ մեր դպրոցներում ուսումնական պարապմունքների առաջին իսկ օրերից գրաճանաչության ուսուցումը կապվում է կարդալու ուսուցման,երեխայի մեջ կարդալու կարողունակության մշակման հետ, որովհետև այն երեխայի ընդհանուր զարգացման ու մտավոր առաջընթացի միջոցն է։Կարդալու ուսուցումը,փաստորեն, ինքնանպատակ չէ, այն երկակինշանակություն ունի.Երեխայի համար կյանքում խիստ գործնական կարողություն և ինքնազարգացման ու գիտելիքների ձեռքբերման միջոց է։ Տարրական դասարաններում, ինչպես բացատրական ընթերցանության, այնպես էլ քերականության դասերին տարվող աշխատանքներից ամենահիմնական կարդալու հմտությունների ճիշտ մշակումն ու բազմակողմանի զարգացումն է, որի շնորհիվ երեխան հաղորդակից է դառնում իր մայրենի լեզվի հարստություններին, ձեռք է բերում գրքերի աշխարհ թափանցելու բանալին։

Կարդալն, ըստ էության, հոգեկան մի բարդ գործողություն է,որի վերլուծությունը կօգնի ճիշտ ըմբռնել ոչ միայն այդ մտավոր գործողության մտավոր բաղադրամասերն ու դրանց փոխադարձ կապը, այլ դրանց ուսուցողական դժվարությունները և կարդալու ուսուցման ճիշտ կազմակերպման գիտական հիմունքները։

Կարդալու համար պետք է ճիշտ ճանաչել և միմյանցից տարբերել հայերենի բոլոր տառերը՝ ամենատարբեր ու բազմապիսի տառակապակցություններում։

Սա կարդալու գործողության առաջին աստիճանն է, որը ըստ էության, գերազանցապես տեսողական գործողություն է։

Սակայն կարդալու համար միայն տառեր ճանաչել դեռևս բավական չէ, պետք է նաև դրանք վերլուծել իրենց համապատասխան հնչյուններին, այսինքն՝ տեսողական տպավորությունները խոսքային շարժումների (մկանների շարժումներ) միջոցով վերածել իրենց համապատասխան ձայնային կամ հնչյունային տպավորությունների։Սա արդեն կարդալու գործողության երկրորդ աստիճանն է, որը ըստ էության հնչունաշարժողական գործողություն է։

Պետք է նկատի առնել,որ բառերը ճանաչելը և դրանք իրենց համապատասխան հնչյունների վերածել դեռևս կարդալ չէ, որովհետև բառը երբեք հնչյունների մեխանիկական գումար չէ։ Բառը ոչ միայն հնչյունական, այլև իմաստային տեսակետից բոլորովին նոր որակ է և արմատապես տարբերվում է իր մեջ մտնող առանձին հնչյունների պարզ գումարից։ Իրենից ամբողջական միավորներ ներկայացնող բառեր ստանալու համար պետք է կարողանալ նրա կազմի մեջ մտնող և որպես առանձին հնչյուններ ընկավլող լեզվական տարրական մասնիկները միավորել վանկերի, իսկ վանկերն էլ բառերի մեջ, այսինքն՝ տիրապետեն հնչյուններն իրար հետ համակցելու, վանկի ու բառի մեջ դրանք միավորելու, ամբողջական բառերով կարդալու կարողունակությանը։

Սա կարդալու գործողության երրորդ՝ հնչյունների կապակցման ու բառի ամբողջական աստիճանն է։

Հարկ է նկատել, որ այժմ մեթոդիստները ցանկանում են այս երկու աստիճանները միաձուլել կարդալու ալգորիթմի ձևավորումն արագացնելու և ավելի կայուն հիմքի վրա դնելու համար։Արդեն մեկ տասնյակից ավելի է,որ մեր դպրոցներում հաջողությամբ գործադրվում է գրաճանաչության ուսուցման հնչութավանկային վերլուծական համադրական մեթոդ ՝ ըստ որի կարդալու սկզբնական միավոր է ընդունված վանկը, և երեխաները հենց սկզբից սովորում են կարդալ վանկերով, բառի

մեջ տեսնել ու վերարտադրել վանկային միավորները :Սա մեծապես արագացնում է կարդալու մեխանիզմի ձևավորումը:

Կարդալու գործողությունն այս աստիճանում ևս դեռ թերի է, որովհետև չի ապահովում կարդացածի ըմբռնումը <<Կարդալ կնշանակե մտածել>>:Բացի աչքից ու բերանից ընթերցանության ժամանակ հոգին նույնպես պիտի գործողության մեջ դրվի:

<<Մարդը ընթերցելիս պիտի մտածե, նա ընթերցած պիտի մտքի սեփականությունը դարձնե, պիտի հասկանա և,եթե հասկանում է,նա այդ պիտի ապացուցանե յուր ընթերցանության գեղեցկությամբ>>,- գրում էր Ա.Բահաթյանը: Այսպիսով, կարդալու գործողության այս բաղադրիչ տարրերը տարբեր մարդկանց մոտ հանդես են գալիս տարբեր հարաբերությամբ ,և հենց դրանով էլ պայմանավորված են միևնույն բնագիրը տարբեր ձևերով կարդալու, հասկանալու և վերապրելու անհատական տարբերություններ:

Կարդալու անհատական տարբերություններն ամենից առաջ ցայտուն կերպով արտահայտվում են սկսնակ և վարժ կարդացողների միջև, որոնց կարդալու գործողությունը որակապես խիստ տարբեր է:

Սակայն անծանոթ ու բարդ բնագրերն ընթերցելիս, ինչպես նաև հոգնած կամ անուշադիր լինելիս ամեն մի ընթերցողի մոտ էլ որոշակի կերպով նկատվում է, որ դրանք իրարից որակապես տարբեր ու առանձնակի գոյություն ունեցող բաղադրիչներ են:Բարդ բնագրերը կարդալիս երբեմն աշակերտ կարդում և արտասանում է բառերը, բայց նույն պահին չի հասկանում կարդացածի միտքը, ուստի ստիպված երկրորդ և նույնիսկ երրորդ անգամ է անդրադառնում միևնույն տողի կամ բնագրին՝ այն ըմբռնելու համար:

Մոտավորապես նույնպիսի երևույթ է տեղի ունենում երբ, աշակերտն առանց կենտրոնանալու կարդում է ինչ-որ բան, շարունակ հայացքը սևեռելով առանձին բառերի վրա առանց մտքի և հոգու մասնակցության, կարդում է՝չհասկանալով կարդացածը:

Վարժ կարդացողի մոտ կարդալու գործողության անբաժանելի ամբողջականության այդ երևութականությունն առաջանում է այն դեպքում, երբ նա ոչ միայն տառերով ու վանկերով չի կարդում,այլև բառի մեջ բոլոր բառերը չի տեսնում, ըմբռման մի ակտի միջոցով տեսնում է բառի կամ նախադասության մի կամ մի քանի մասերը միայն և

կարողանում է ամբողջացնելով արդեն կարդացած ու դեռ կարդացած մասերը,ճիշտ կարդալը։Այս ձևով կարդալ երկարատև վարժությունների պատրաստի մտապատկերներ ունենալու արդյուք է։ Վարժ կարդացողը բառեր կազմելու համար առանձին տառեր չի կապում իրար, այլև ըմբռման մի ակտի միջոցով միանգամից կարդում է ամբողջական բառերն ու նախադասությունները։

Սկսնակ կարդացողի ընթերցումն զգալի կերպով տարբերվում է վարժ կարդացողի ընթերցումից։Նրա մեջ կարդալու գործողության տարբեր աստիճանները կամ բաղադրամասերը տեսնելը, հնչելու, հնչյուններից վանկեր և վանկերից բառեր կազմելու, կարդացածը հասկանալ <<միաժամանակ>> կամ սերտորեն միացած ձևով տեղի չեն ունենում, դրանց միջև որոշակի դադարներ կամ ընդհատումներ են տրվում, որոնց տևողությունը կախված է կարդալու մեջ սկսնակի ունեցած վարժվածությունից։ Որքան ցածր է այդ վարժվածությունը, որքան քիչ է մտապատկերներ, այնքան այդ ընդմիջումներն ավելի ուժեղ են արտահայտվում։Հենց այդ պատճառով էլ սկսնակի մոտ կարդալու գործողության առանձին աստիճանները կամ բաղադրամասերը խիստ ընդգծված ձևով են հանդես գալիս և պարզորոշ կերպով զանազանվում ու գիտակցվում են։

Սկսնակ կարդացողը բառի մեջ բոլոր տառերը տեսնում է, յուրաքանչյուրի վրա առանձակի ուշադրություն դարձնում կարդալու տեխնիկայի զարգացմանը զուգընթաց։ Նա բառերը համեմատաբար ավելի հեշտ է կազմում, սակայն յուրաքանչյուր բառի վրայ հատուկ ուշադրություն դարձնելու պատճառով դրանք արտաբերում է առանձնացված,որի ընթացքումը դարձնում է միապաղաղ ու անարտահայտիչ։Այսպիսի ընթերցման պատճառով նա հաճախ չի հասկանում իր կարդացած բովանդակությունը, որովհետև կլանված է լինում միայն տառերի ու բառերը տեսնելու մեջ։

Կարդալու գործողության հոգեբանական առանձնահատկությունների մասին խոսելիս չի կարելի կանգ չառնել նրա երկու հիմնական ձևերի ՝ ձայնով և լուռ կարդալու վրա, որոնցից թե ՛մեկը, թե ՛ մյուսը մարդու կյանքում իրենց հատուկ տեղն ունեն։

Ձայնով կարդալու համար առանձնահատկությունն այն է, որ կարդացողը ոչ միայն իր, այլ նաև ուրիշների համար կարդում, ուստի նա այդպես պիտի կարդա, որ

կարողանա հասկանալ կարդացածի բովանդակությունը , առաջացնի հույզերը և ապրումներ լսողի մոտ։

Ձայնով և լուռ ընթերցումը միմիյանց տարբերվում են նաև կարդացածը հասկանալու գործողության առանձնահատկություններով։

Կարդացածի հասկանալը լուռ կարդալիս պայմանավորված է միայն կարդացողի մտքում կատարվող մեկնաբանությամբ ու հասկանալով, իսկ ձայնով կարդալիս՝ ոչ միայն կարդացողի, այլև լսողների, որի մեծապես դժվարացնում է կարդալու գործողությունը, քանի որ այս դեպքում կարդացողը չի կարող վերադարձ կատարել ու նորից անդրադառնալ իր նախկին կարդացածին, պետք է ձգտի հասնել բնագրի մեկնաբանմանն ու ըմբռմանը հենց առաջին ընթերցման ընթացքում։

Կարդալու հմտության ձևավորման երկրորդ շրջանի կամ փուլի հիմնական առանձնահատկությունը ամբողջ մասերը վարաձելն ու այդ մասերը առանձին-առանձին երեխայի գիտակցությանը հասցնելն է։

Կարդալու հմտությամբ ձևավորման երկրորդ շրջանի վերլուծված տարրերի հակադրման կամ ամբողջի վերականգման գիտակցմանը փուլն է։

Այս շրջանում համադրելու կարողությունը երեխայի մեջ այնքան է մշակվում ու զարգանում, որ նա հնարավորություն է ստանում միանգամից տեսնել, զգալ ու ընկալել ամբողջը։

Երրորդ՝ կարդալու գործողության ավտոմատացման շրջանում ճշտվում ու ամրապնդվում են նախորդ երկու շրջաններում ընկալման տարբեր ձևերի միջև ստեղծված կապերը, որոնց շնորհիվ այս շրջանում ևս կարդալու գործողության որակական փոփոխություն է տեղի ունենում։

Կարդալու հմտության ամենաբարձր աստիճանը համարվում է արտահայտիչ ընթերցանությունը, որը հոգեբան Տ. Եգորովի դիպուկ արտահայտությամբ, արդեն որակական նոր աստիճան է և, փաստորեն վերածվում է արվեստի, որովհետև միայն վարժությամբ հնարավոր չէարտահայտիչ ընթերցման հասնել, դրա համար նաև հեղինակի խոսքը հասկանալու, վերապրելու և վերարտադրելու այլ տվյալներ էլ են հարկավոր, որոնք դուրս են կարդալու տեխնիկային ընդգրկման շրջանակներից։

Գրաճանաչության այբբենական կամ գրուսուցման և նախաայբենական շրջանների սահմանը հնչյուններից անցնում են տառերին: Այս շրջանի հիմնական խնդիրներն են.

- ուսուցանել բոլոր հնչյուն-տառերը,
- սովորեցնել ճիշտ համադրել հնչյուններն ու տառերը,
- յուրացնել տառերի համադրումը,
- գործնականորեն յուրացնել վայելուչ գրելու կանոնները,
- մշակել ամբողջական բառերով սահուն կարդալու կարողությունը,
- զարգացնել ընթերցանության նկատմամբ սեր,
- ձևավորել ընթերցանական տարրական կարողությունները,
- զարգացնել խոսքն ու մտածողությունը,
- հաղորդել լեզվական տարրական գիտելիքներ,
- իրականացնել ճանաչողական, դաստիարակչական, զարգացնող աշխատանքներ՝ նպաստելով երեխաների անձի ձևավորմանը:

<<Այբբենարան>>-ի հիմնական նպատակը երեխաների կարդալու և գրելու կարողությունների ձևավորումն է ու զարգացումը: Դասագրքերում տեղ գտած <<Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ>> առաջադրանքները ևս նպատակաուղղված են երեխաների ստեղծագործական երևակայության և գլխավորապես խոսքի, բառապաշարի զարգացմանը: Երեխաներին պետք է տրվեն այնպիսի առաջադրանքներ, որ երեխան կարդա առանց հարկադրանքի, հաճույքով: Այս դեպքում կարդալը դառնում է ոչ թե նպատակ, այլ միջոց: Նպատակը դառնում է ընկալումը, իսկ կարդալը դառնում է պայման:

Ձայմով կարդալը ոչ միայն երեխանների մեջ մշակում ու զարգացնում է կարդալու հմտությունները, այլև սովորեցնում է խոսելու օրգանները, ձայնը և շնչառությունը ճիշտ կառավարելու արվեստը, որը կատարելության է հասնում աստունքողների մոտ: Կարդալու ողջ գործընթացը, ինչպես ցանկացած մտավոր գործունեություն, սերտորեն առնչվում է մտածողության հետ:

Սահուն կարդալու համար անգնահատելի են բազմակի ընթերցանությունը, բարձրաձայն և շշուկով ընթերցանությունը:

Արտահայտիչ կարդալու կարողունակության ձևավորմանը նպաստում է բարձրաձայն ընթերցանությունը, առոգանությունը, կետադրական, դերային ընթերցումները և բեմականացումները:

ԳԼՈՒԽ 2. Մայրենիի ուսուցման և կարդալու որակական հատկանիշների ընդհանուր բնութագիրը և հիմնական նպատակները

Տարական դպրոցում մայրեննիի ուսուցման և կարդալու որակական հատկանիշների ընդհանուր բնութագիրը և հիմնական նպատակներն են.

Ձևավորել և զարգացնել երեխաների կարդալու կարողությունները

Հստակեցնել, պարզեցնել և հարստացնել նախադպրոցական տարիքում և գրաճանաչության ողջ ընթացքում երեխաների ձեռք բերած բառապաշարը,

Երեխաներին վարժեցնել կապակցված խոսք կառուցելու գործընթացում,

Ձևավորել փոքրածավալ բազմապիսի ստեղծագործություններ կարդալու և դրանց իմաստը հասկանալու կարողություն,

Ընթերցանության միջոցով նպաստել մարդկանց, մշակութային և այլ արժեքների մասին գիտելիքի ձեռքբերմանը,

Գեղարվեստական փոքրածավալ ստեղծագործությունների ընթերցմամբ փորձել ձևավորել հայեցի մտածողություն և աշխարհաճանաչողական պատկերացումներ

Կարդալու միջոցով սովորեցնել սովորել և գնահատել սեփական և ուրշների արժեքները:

Աշակերտների խոսքի զարգացման, ազատ և անկաշկանդ արտահայտվելու հմտությունների մշակման համար կան բազմաթիվ եղանակներ ու միջոցներ: Երբ երեխանները կարդում են արդեն իսկ տրված բնագիրը, ապա այդ ընթացքում արդեն

իսկ որոշակիորեն զարգանում է նրանց կապակցված խոսքը ձևավորելու հմտությունները, որում նրանք էլ ավելի կհմտանան եթե, օրինակ հանձնարարենք նրանց պատմել, թե ինչ իրավիճակ կամ երևույթ է պատկերված բնագրին կցված նկարում: Քանի որ տարրական դասարաններում բնագրին կցված են նկարներ, ապա դա ավելի է դյուրացնում բնագրի ընթերցանությունից անմիջապես հետո նկարի բովանդակության պատմումը: Հետաքրքրական է նաև այն, որ կարելի է բովանդակության պատմումից հետո աշակերտներին հնարավորություն տամ համեմատել նկարազարդված պատկերի տեքստային իրենց վերարտադրությունը և հենց բուն նյութը՝ բնագիրը: Դա հնարավորություն կտա զարգացնել և՛ պատկերավոր մտածողությունը, և զարգացնել ազատ, անկաշկանդ խոսքը, և ժամանակի ընթացքում հմտանալ կապակցված խոսքի կառուցման գործընթացում: Այս առաջադրանքի կատարման շնորհիվ երեխան կարող է էլ ավելի ազատ հանդես գալ: Գնալով կդառնա ավելի համարձակ, առաջնահերթություն կտա ընթերցանությանը, որի հետ համեմատության եզր կդարձնի պատկերազարդված նկարը:

Չեմ սխալվի, եթե ասեմ, որ մեր առջև դրված նպատակներից և կարդալու որակական հատկանիշներից ամենագլխավորը կամ այսպես ասած գերխնդիրը լավ կարդալ սովորեցնելն է: Կարդալու կարողության բարձր մակարդակն ունի որոշակի բնութագրիչներ, որոնք ներկայացնում են կարդալու որակները:

Լավ կարդալու որակներն են.

- Ճիշտ կամ անսխալ կարդալը,
- Հասկանալով կամ գիտակցորեն կարդալ,
- Վարժ կամ սահուն կարդալ,
- Արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ,
- Արագ կարդալ

Ճիշտ կամ անսխալ կարդալ ասելով՝ հասկանում ենք բնագրի բարձրաձայն ու հստակ ընթերցումը, երբ աշակերտները բաց չեն թողնում ոչ մի տառ, վանկ:

Երբ բառի մեջ չեն շփոթում տառերի դասավորությունը,երբ հնչույթները ճիշտ են արտաբերվում, բառը չեն շփոթում այլ բառի հետ,բառերն արտասանվում են գրական հայերենի արտասանության չափանիշներին համապատասխան ՝ պահպանելով հայերենի կանոնները։

Տարական դասարաններում ՝ավելի հաճախ կարդալու նախնական փուլում, երեխաները շփոթում են այս կամ այն տառերը, որոնք կարող են բառային շփոթ ստեղծել կապակցության մեջ (օրինակ՝ ուշ-ու, մարտ-մարգ, կրունկ-կռունկ և այլն)։ Դրանից խուսափելու համար աշակերտներին պետք է սովորեցնել համբերատարություն դրսևորել և բառերը կարդալ մինչև վերջ, հասկանալ ամբողջական իմաստը և նոր միայն արտաբերել այն։ Սա արդեն ճիշտ կարդալու հանգամանքը թ, որը նպաստում է լավ կարդալու մակարդակի որոշակիորեն բարձրացման։

Կարող ենք հանդիպել նաև այնպիսի դեպքերի, երբ երեխան կարդա վարժ ու շատ արագ, բայց ունենա արտասանական ու լեզվական խնդիրներ։ Եթե կա հնչյունային խնդիր, որը հայտնաբերում ենք արդեն այբբենական շրջանում, ապա այն պետք է ուղղվի ուսուցչի, իսկ եթե խորացված է, ապա լոգոպեդի միջոցով։

Բարբառային ազդեցուցյունից խուսափելու համար պետք էերեխաների հետ տարվեն համապատասխան աշխատանքներ,որոնք ուղղված կլինեն գրական խոսքում բառբառային տարրերի, բառերի և շատ օգտագործելի կապակցությունների վերացմանը։Ցանկալի արդյունքի հասնելու համար պետք է նման աշակերտների հետ իրականացվեն պարբերական վարժություններ և աշխատանքներ, որոնց օգնությամ աշակերտների հիշողության մեջ կամրակայվեն գրական արտասանությունն ու գրությունը ։Արտահայտիչ ընթերցել հմայք է հաղորդում լեզվին, խոսքը դարձնում է ավելի պատկերավոր։ Հենց այդ պատկերավորությունն էլ թույլ է տալիս տարբերակել արտահայտիչ ընթերցանության երկու եղանակ՝ բեմական արտահայտիչ ընթերցանություն և դասարանական արտահայտիչ ընթերցանություն։

Արտահայտիչ ընթերցանության հասնելու համար հարկավոր է մի շարք քայլերի հաջորդականություն, միայն որի անընդհատ կիրառման դեպքում կգրանցվեն դրական արդյունքներ։Այդ արդյունքներին հասնելու համար ուսուցիչը պարտավոր է.

1.Աշխատանքը սկսել նյութի վերնագրից, բացահայտել վերնագրի և նյութի բովանդակության կապը՝ հիմնավորելով վերնագրի ոչ պատահական կամ տեղի ընտրությունը։

2.Նյութի ընթերցումն և բովանդակությունը ավելի մատչելի դարձնելու շուրջ կազմակերպել զրույց, երկխոսություն։

3.Դասարանում միասին հանձնարարել կատարել բնագրային աշխատանքներ, օրինակ ՝ ընդգծել կարևոր մտքերը։ Բավականին հետաքրքիր է ստացվում նաև այն աշխատանքը, երբ երեխաներին հնարավորություն է տրվում ընթերցված բնագրին իրեն դուրս եկած հատվածը գունավորել, կամ ըստ իր ցանկության ՝ արտահայտել հատվածներում թաքնված հույզերը (օրինակ կարմիրը՝ ուրախություն, կապույտը ՝ հանդարտություն, դեղինը՝ ոգևորվածություն, կանաչը՝ հանգստություն, սևը՝ թախիծ, տխրություն, սպիտակը՝ պարզություն,հստակություն և այլն)։

4.Բացատրությունների, հարցերի միջոցով աշակերտներին օժանդակել տեքստի հիմնական ասելիքը հասկանալու գործում։

Տարրական դպրոցում մայրենիի դասերը կազմակերպվում են բացատրական ընթերցանության մեթոդով,որը դիդակտիվ բազմաբնույթ ձևերի ու միջոցների, զարգացնող տեխնոլոգիաների, մանկավարժահոգեբանական տեսանկյուններով հիմնավորված մեթոդների համակարգ է։ Տարրական դպրոցում մայրենիի դասի գլխավոր նպատակը երեխաներին կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ կարդալ սովորեցնելն է, ընթացանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնել և ընթերցողական կարողության ձևավորումը և զարգացումը։ Եթե բավարար մակարդակով ձևավորված է կարդալու կարողություն, ապա ընթերցած բնագրի շուրջ իրականացվող մեթոդապես ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է նաև անձի բազմակողմանի զարգացման միջոց։ Ուսուցման հիմնական փուլում հիմնական ուշադրությունը դարձվում է կարդալու, մասնավորապես հասկանալով կարդալու կարողության զարգացմանը

միտված նպատակով։<<Դասին նախապատրաստվելու տեխնոլոգիան ենթադրում է նպատակի հետ կապված չորս խնդրի լուծում։ Որոշել դասի մանկավարժական նպատակը՝ ելնելով դասանյութի հնարավորությունից։ Աշակերտի համար որոշել մի այնպիսի ուսումնական գործունեություն, որի դաստիրակչական արդյունքը ուսուցչի նպատակն է։Աշակերտի համար ևս պետք է որոշել այնպիսի նպատակ, հանուն որի նա կամավոր է ընդգրկվելու ուսուցչի նախատեսած այդ գործողության մեջ։Նպատակը որոշելուց հետո պետք է մտածել աշակերտի գիտակցության մեջ այն առաջացնելու մասին։ Վերջին խնդրի լուծումն ուսուցչիը կարող է ապահովել արդեն ուսուցման մեթոդների միջոցով>>։

Բացատրական ընթերցանության մեթոդը բազմաթիվ մեթոդների համարիլ է , որի բաղադրամասերի ճիշտ իրականացման դեպքում լուծվում են նաև կարդալու գործընթացի հետ կապված աշակերտների բազմաբնույթ նպատակները։

Որպեսզի բացատրական ընթերցանության մեթոդով կազմակերպվող մայրենիի դասն անարդյունավետ և ձանձրալի չլինի, կարևոր է իմանալ նրա բաղադրամասերից յուրաքանչյուրի իրականացման գործընթացի առանձնահատկությունները։ Մայրենիի տարրականուսուցման մեթոդիկայում մշտապես դիտարկվել են բացատրական ընթերցանության մեթոդի հինգ բաղադրիչները՝ • Զրույց • Բնագրի ընթերցում • Բառային աշխատանք • Աշխատանք բնագրի շուրջ • Պատմում • Ամփոփում

Հետաքրքրական է, որ այս բաղադրիչներց զրույցը և դաստիարակության մեթոդ է և՛ ուսուցման։ Զրույցի կարևորությունն ուսուցման գործընթացում ընդգծել է Խ. Աբովյանը։ Նա նշում էր զրույցի երկու կարևոր գործառույթների մասին, որոնցից առաջինն ունկնդրին նախապատրաստում է ստեղծագործության գաղափարի ընկալմանը՝ <>, և երկրորդ՝ երեխայի կենսափորձով ձեռք բերված գիտելիքների իմաստավորմանը նպատակաուղղված զրույց, որը աշակերտներին տալիս է խոսքի նմուշ, ձևավորում է զգացածը, տեսածը, ապրածը, վերապրելու, վերարտադրելու, դրանց շուրջ դատողություններ անելու կարողություններ։

Ընթերցանությանն, այսպիսով, միտված է ոչ միայն տառաճանաչությանը, երեխաների մտավոր զարգացմանը, այլև բառապաշարի հարստացմանը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բառապաշարի հարստացումը՝ իբրև աշակերտի խոսքի զարգացման նախապայմաններից մեկը, հատուկ ուշադրության է արժանի։ Այն կարելի է համարել արդի մանկավարժության կարևոր խնդիրներից մեկը, ըստ որի՝ մայրենիի տարրական դասընթացի առաջնային նպատակներից է աշակերտի բանավոր խոսքի զարգացումը, որին նպաստում են ընթերցանությունը, չափածո ստեղծագործությունների անգիր սովորելը, որը մղում է սովորողին տեքստն իմանալով սովորել նաև դրանում առկա բոլոր բառերը։

Ելնելով այս ամենից՝ անհրաժեշտ է զարգացնել կրտսեր դպրոցական բանավոր և գրավոր խոսքը, ստեղծագործական կարողությունները, առավելապես զբաղվել բառապաշարի հարստացման ուղղությամբ։ Ապահովել մայրենի լեզվից տարրական գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերման համար անհրաժեշտ պայմանները։ Բառքպաշարի հարստացման բավականին լավ խթան կարող է հանդիսանալ իմաստով իրար մոտ, առնչակից բառեր գտնելու գործընթացը, նորածանոթ բառերի դուրս բերումը ընթերցված նյութից և այն սեփական բառապաշարում կիրառելը։ Հետաքրքիր և միաժամանակ ուսանելի է բարբառային բառերի վերածումը գրականի։ Աշակերտների շրջանում զարգացնել ընթերցանության գործընթացի և ընթերցելու պահանջմունքի նկատմամբ ակտիվ հետաքրքրվածություն տարբեր մեթոդներով, միջոցներով և ձևերով։

Այսպիսով, աշակերտն ապագա ուսուցիչն է, բժիշկը, նախարարը, ինչու չէ, նաև բանվորն ու գործարարը, գյուղացին ու գյուղատնտեսը, և ցանկացած բնագավառում մարդը պետք է ունենա համապատասխան բառապաշար, խոսք կառուցելու մշակույթ։ Ինչպես անմահ լոռեցին է ասել.<<Բառը մի աշխարհ է>>, և բառի ճիշտ ու տեղին օգտագործելն ավելի կհարստացնի մարդու խոսքը, բառապաշարը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. Բահաթրյան, Ընթերցարանը և նրա նշանակությունը, գիրք2-րդ, Երևան,1961,էջ71

Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, Հ.5Էջ15։

Ջ.Գյուլամիրյան, խոսքի զարգացում: Տեսություն և պրակտիկա, Երևան,<<Զանգակ>> հրատարակչություն,2013, 135էջ

Ջ. Գյուլամիրյան, Կարդալու կարողության և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, <<Լույս>> հրատարակչություն1998,125էջ

Ջ.Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան2015,էջ96

Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, Երևան,1946,էջ443